հրդեհների հաւասակչռութիւնը, աստղաբաշխական տիեզերքը: Ահ, ինչպէս չնախանձէի Սիկիլիոյ նոճիզարդ այն ափերին, ուր մարդկային հոգին առաջին անգամ թեւեր առաւ եւ ճախրեց: Ճախրեց, մինչ ալիքները ովկիանոսների վրայ կանգ առին, ամպերը աստղերի շուրջը շղարշ մանեցին, անհունը սրսփեց ու երաժշտութիւնը՝ թեւերի մէջ ներդաշնակուած տիեզերքը՝ խաղաղ ու պարզ ապրումի վերածեց:

Անծանօթը խօսում էր յուզուած չեչտով, ներշնչուած ու մի քիչ ղղային: Մարած ծխախոտը մատների մէջ դողում էր, աչքերը անբնական կերպով փայլում էին, եւ գլուխը անհանգիստ շարժւում էր:

— Ձկայ աւելի սրտաճմլիկ մի բան,— շարունակեց մարդը,— քան աստուածների մահը: Աստուածների մա՛հը... Խօսքս այն ահաւոր ողբերգութիւնների մասին չէ, որոնք տեղի են ունենում Ողիմպոսի կատարին աստուածների մէջ: Այնտեղ, անասելի տառապանքները, սպանութիւնները, ոճիրները հրսկաների աշխարհին են պատկանում, մեծդի են եւ մեր դատողութիւնից դուրս: Ես խօսում եմ այն մահերի մասին, որոնք տեղի են ունենում մարդկային հոգիների մէջ — ցամքած հորերի այն տիղմը, որ կլանում է ամէն մի վեհութիւն...

— Ո՞ւր է Պղատոնեան Իդէաների աշխարհը. ո՞ւր է Դեմիուրգը, որի մէջ պարփակուած են բոլոր ձեւերը, ո՞ւր է Ակադեմոսի պայծառ երկինքը, Թիրենեան ծովի խոր լաղուրը, ո՞ւր է Ապողոնեան քնարի լարերով սրսփող հոյակապ այն տիեզերքը: Ես ձեզ հարցնում եմ, ո՞ւր է այդ ամէնը...

— Սոկրատը ժպտում է: Արիստոտելէսը զեսեղում է նրան բարձրաբարձր անդրաշխարհում ու այլեւս այդ մասին չի խօսում: Ցանձնում է ամպերի արխիվին եւ զբաղւում է ուրիշ գործով: Եւ այն օրից ի վեր տիղմը շարժւում է եւ մարդիկ չորցած շրթունքներով աստուածային զովութիւն են փնտռում: Հրեաստանի թշուառութիւնից դուրս է գալիս մի նոր աստուած եւ լուսաւոր աչքերով նայում է աշխարհին: Նրան խաչում են: Մարդիկ՝ խաչաձեւ փայտերի վրայ նրան սպանանում են եւ, սպաննելուց յետոյ, նրա մի կաթիլ արիւնի առջեւ, նրա մի կտոր մարմնի առջեւ, ծնկաչոք երկրպագում են:

— Կրօնական ժողովներ, վիճաբանութիւններ, պատերազմ, կողոպուտ նրա գերեզմանի շուրջը: Աւգոստինոս, Լիւթեր, Սպինոզա, Կանտ, Ֆիխտէ... Հասկանո՞ւմ էք, տեսնո՞ւմ էք, աստուածների պարը վիթխարի բեմի վրայ. լսո՞ւմ էք դարերի խորից հնչող բազմագան ձայները. փողերը հեծկլտում են բարձր լեռների վրայ, ու անտառները խարշափում են. հորիզոնի կատարին սպառնացող ամպեր են կուտակւում, ահաւոր ոռնումով չանթահար վայր են գլորւում, մինչ ժողովուրդները սարսափած քարայրների մէջ սպասում են: Սպասում են աստուածների մահին ու, երբ նրանք մեռնում են, մարդիկ խենթացած վազում են՝ ձուկի բերանից, ալիքների վրայ տատանուող խիտունջից, ախտի միջից ծնուող նոր աստուածներին երկրպագելու:

— Մարդիկ, բարեկամ, մեծ աստուածասպաններ են, ու հէնց այդ պատճառով պատրաստ են ընդունելու նոր զոհեր: Մեր գիւղացիները, սրբատեղի գնալու ժամանակ, չոյում, գուրգուրում են այն ոչխարին կամ եղին, որին պիտի մատաղ անեն: Ահա՛ ինչու ես կարծում եմ, որ Լենինը աստուած է... Ամենաահաւոր աստուածներից մէկը, որ երբեք մարդկութիւնը տեսել է: Սողնիսող մի աստուած, ծընուած քաղաքի գործարանի մէջ, երկաթէ մեքենայի մօտ, երեկոյեան սուլոցի հետ միասին, երբ հնոցը դեռ չարունակում է ապրել:

— Մտածեցէք, մտածեցէ՛ք, ի՞նչ անկում... Փիթագորեան ոսկէ թիւերը, որոնք կառուցել էին տիեզերական ներդաշնակութիւնը, իջել են հաշուապահական տետրակների մէջ եւ ստամոքսների ելք ու մուտքն են հաշւում: Վիճակագրութիւնը — մոգական բառ, որի շուրջը ժողովուրդները կոտորւում են, գիւղերը եւ քաղաքները այրւում, երկրները ոչնչանում... Լենինը, հաշուապահական թիւերի պաղարիւն եւ անողոք աստուածը, մեքենաների Մովսէսը, ջրանցքների եւ էլեկտրականացման առաքեալը: Խլուրդը, Վոլգերի հսկայ խլուրդը...

Անսպասելի այդ հիւրս բնականոն վիճա-

Հայ մատենագրության թուանշանային գրադարան